ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ

Չարենցավանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ս. Հովհաննիսյանի (լիազորագիր տրված ՝ 20.12.2019թ.)

Քննելով Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ. ներկայացված և 10.01.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/04 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 10.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2019 թվականի նոյեմբերի 25-ին Չարենցավանի համայնքապետարանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառմամբ՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով «Գնանշման հարցում» գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել երեք մասնակից՝ կցելով գնային առաջարկներ ստորև բերված գներով.

Չ. հ.	Մասնակցի անվանում	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ	1000000	920000	-	1920000
	«Փրոմոուշն» ՍՊԸ	4000000	800000	-	4800000
	Ա/Ձ Պավել Գաբրիելյան Կամոյի	2700000	300000	-	3000000

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները պատվիրատուի կողմից կազմակերպվել էին գործող իրավական կարգավորումներին ոչ համապատասխան ձևաչափով, վերոնշյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/83 որոշման հիման վրա պատվիրատուն կազմակերպել է գնի նվազեցման նոր բանակցություններ՝ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Կազմակերպված գնի նվազեցման նոր բանակցությունների շրջանակում գնահատող հանձնաժողովը ընդունել է Ա/Ձ Պավել Գաբրիելյան Կամոյի նոր գնային առաջարկը՝ այն է 1800.0 հազ դրամ և կայացրել վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշում՝ 08.01.2020թ.-ից սահմանելով անգործության ժամկետ:

Սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, որ «հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:»: Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ն իր գնային առաջարկով ներկայացրել է 2700.0 հազ դրամ ինքնարժեք, իսկ հետագայում իր գնային առաջարկը նվազեցրել է՝ առաջարկելով ծառայություններ մատուցել ընդհանուր 1800.0 հազ դրամով, որը ներառում է ինքնարժեքն ու շահույթը: Գնումների մասին ՀՀ օրենսդրությունից բխում է, որ գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները կարող են վարվել բացառապես ակնկալվող շահույթի շրջանակներում, իսկ հաշվարկված ինքնարժեքը ենթակա չէ նվազեցման, քանի որ այն հաշվարկվում է համապատասխան տեխնիկական բնութագրերի պահանջներից ելնելով և այդ պահանջներին բավարարող ծառայությունների մատուցումն ապահովելու համար: Միանշանակ է, որ ինքնարժեքը փոփոխական լինել չի կարող և պետք է հիմնվի հստակ հաշվարկների վրա: Իսկ եթե մասնակիցը գնային առաջարկը կազմելիս սխալվել է, ներկայացնելով սխալ ինքնարժեք, ապա հայտը ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Ա/Ձ Պավել Գաբրիելյան Կամոյին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Չարենցավանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Չարենցավանի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.01.2020թ. թիվ 33-20 գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2020 թվականի հունվարի 10-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և Չարենցավանի համայնքապետարանի գրավոր դիրքորոշումը:

Չարենցավանի համայնքապետարանը էլեկտրոնային, թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների գնման նպատակով կազմակերպել և իրականացրել է ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2019-11-25 21:03:00-ից մինչև 2019-12-02 11:00:00 ժամը ներառյալ:

ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ն, «ՓՐՈՄՈՈՒԾՆ» ՍՊԸ-ն և «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 2 որոշմամբ մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանը, որ գնման գործընթացն իրականացվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով և այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից (ինչպես նաև համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներից) ոչ մեկը մասնակից չի եղել գնահատող հանձնաժողովի նիստին՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած

մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 3 որոշմամբ Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է անգործության ժամկետ:

Թվարկված գործողությունները 2019 թվականի դեկտեմբերի 10-ին բողոքարկվել են «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից: Չարենցավանի համայնքապետարանը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 23-ին կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/83 որոշումը՝ կազմակերպել է նոր բանակցություններ և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի և անցկացման կարգի մասին, որտեղ հստակ սահմանվել է, որ.

<<... միաժամանակյա բանակցությունները վարվելու են հետևյալ կարգով.

● Միաժամանկյա բանակցությունները սկսվում են 2019 թվականի դեկտեմբերի 30-ին ժամը 11:00-ին, որը կկայանա Չարենցավանի համայնքապետարանի վարչական շենքում՝ ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 հասցեում:

● Բանակցությունների ընդհանուր տևողությունը սահմանվում է 60 (վաթսուն) րոպե:

● Եթե բանակցությունների ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 10-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա բանակցությունները համարվում է ամփոփված, և վերջին քայլ կատարած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից»:

Բանակցությունների մեկնարկը տրվել է 2019 թվականի դեկտեմբերի 30-ին ժամը 11:00-ին, որին ներկա են եղել «Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ-ն, «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը: Բանակցությունների ավարտից հետո «Պավել Գաբրիելյան Կամոյի» ԱՁ-ն կողմից Պատվիրատուին տրամադրվել է բանակցությունների արդյունքում ձևավորված նոր գնային առաջարկ, որը ներկայացվում է ստորև.

Հ/հ	Մասնակցի անունը	Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝			
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1					
1	Պավել Գաբրելյան Կամոյի Ա/Ձ	1570000	230000	0	1800000
2	«Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ	1000000	920000	0	1920000

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 5 որոշմամբ Պավել Գաբրելյան Կամոյի Ա/Ձ–ն ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է անգործության ժամկետ:

Վերը նշված գործողությունները կատարելով՝ Չարենցավանի համայնքապետարանը նպատակ է ունեցել իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում ձեռքբերել կարիքին համապատասխան ծառայություններ՝ համարժեք հատուցմամբ, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման եղանակով: Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն հիմնվել է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Պատվիրատուն հայտնել է, որ ուսումնասիրելով «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի հունվարի 10-ին ներկայացված բողոքը, գտնում է, որ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները.

1. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, որ «Հրավերը պետք է պարունակի՝ .....նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.», որն իրականացվել է գնման ընթացակարգի մասնակիցների կողմից մասնակցության հայտերը ներկայացնելիս:

2. Բողոքում նշված այն փաստը, որ. «Գնումների մասին ՀՀ օրենսդրությունից բխում է, որ գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները կարող են վարվել բացառապես ակնկալվող շահույթի շրջանակներում, իսկ հաշվարկված ինքնարժեքը ենթակա չէ նվազեցման, քանի որ այն հաշվարկվում է համապատասխան տեխնիկական բնութագրերի պահանջներից ելնելով և այդ պահանջներին բավարարող ծառայությունների մատուցումն ապահովելու համար», հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը որևէ իրավական նորմ, դրույթ չի սահմանում վերը նշվածի վերաբերյալ և բանակցությունները չեն կարող վարվել բացառապես ակնկալվող շահույթի շրջանակներում, իսկ հաշվարկված ինքնարժեքը ենթակա է նվազեցման:

3. Բողոքում նշված այն փաստը, որ. «Միանշանակ է, որ ինքնարժեքը փոփոխական լինել չի կարող և պետք է հիմնվի հստակ հաշվարկների վրա», հայտնում ենք, որ ինքնարժեքը, որպես տնտեսական կատեգորիա, հաստատուն մեծություն կամ հասկացություն չէ, և այն կարող է ենթարկվել փոփոխության մի շարք տնտեսական պայմանների փոփոխությամբ պայմանավորված:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ

հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման»:

5. Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն փաստին, որ. «Իսկ եթե մասնակիցը գնային առաջարկը կազմելիս սխալվել է, ներկայացնելով սխալ ինքնարժեք, ապա հայտը ենթակա է մերժման», ապա հայտնում ենք, որ գնագոյացման հաշվարկները կատարվում և գնային առաջարկը ներկայացվում է միայն Մասնակցի կողմից որպես իր կողմից վարվող տնտեսության վերաբերյալ կառավարչական որոշում: Միաժամանակ հայտնում ենք, որ գնային առաջարկի կազմումն ու ներկայացումը Մասնակցի իրավունքն է, իսկ Պատվիրատուն, գնահատող հանձնաժողովը չունեն օրենսդրությամբ սահմանված որևէ լիազորություն ուղղորդելու գնման գործընթացի հնարավոր Մասնակիցներին վերը նշված գործողություններն իրականացնելու ժամանակ, առավել ևս՝ բանակցությունների վարման ընթացքում:

6. Ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում (տնտեսական պայմանների, տարբեր գործիքների և այլնի փոփոխությամբ պայմանավորված) մասնակցության հայտերը ներկայացնելու օրվա և դրան հաջորդող բանակցությունների վարման օրվա միջև ընկած ժամանակահատվածում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինքնարժեքի փոփոխությամբ պայմանավորված՝ Մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ (ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով) ներկայացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ընկալման և մեկնաբանման տարբերություններից, գտնում է, որ գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

Չարենցավանի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կողմից ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար էլեկտրոնային, թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ն, «Փրոմոուշն» ՍՊԸ-ն և «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 26.12.2019թ. էլեկտրոնային ձևով ծանուցվել է բավարար հայտ ներկայացրած մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի և անցկացման կարգի մասին: Բավարար հայտ ներկայացրած մասնակիցներից Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ն, ԷՄ ԷՅ ԷԼ Վի Մենեջմենթ գրուպ ՍՊԸ-ն ներկայացել են բանակցություններին, որի արդյունքում առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև՝

Հ.հ.	Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումները	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Պավել Գաբրիելյան Կամոյի	1570000	230000	0	1800000

	ԱՁ				
2	ԷՄ ԷՅ ԷԼ Վի Մենեջմենթ գրուպ	1000000	920000	0	1920000

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է, ղեկավարվելով Օրենքի 36-րդ հոդվածի դրույթներով, անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի 10.01.2020թ. բողոքը, Չարենցավանի համայնքապետարանի 15.01.2020թ. թիվ 33-20 գրությունը, «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի,

հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների

ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կողմից ՀՀ Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար էլեկտրոնային, թղթային գնումների վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ն և «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն:

Պավել Գաբրիելյան Կամոյի Ա/Ձ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկում **<u>ինքնարժեքը նշվել է 2 700 000 ՀՀ դրամ</u>, շահույթը՝ 300 000 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն 0 ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 3 000 000 ՀՀ դրամ:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշել է նիստը կասեցնել և ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ի կողմից գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում առաջարկվել է հետևյալ գնային առաջարկը՝ **<u>ինքնարժեք՝ 1 570 000 ՀՀ դրամ</u>, շահույթ՝ 230 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 0 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 1 800 000 ՀՀ դրամ:**

Նույն արձանագրության համաձայն՝ Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, որ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Ընդ որում՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է, որ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Պավել Գաբրիելյան Կամոյի ԱՁ-ի կողմից ի սկզբանե հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է **<u>2 700 000 ՀՀ դրամ</u>**, այնուհետև գների նվազեցման շուրջ միաժամանակյա

բանակցությունների արդյունքում վերջինս նվազեցրել է **1 570 000 ՀՀ դրամ**, ինչը սակայն գտնում եմ, որ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, քանի որ նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել նույն կետով սահմանված ծախսերի ինքնարժեքից, որը և ի սկզբանե ներկայացվել է մասնակցի կողմից հայտով:

Դրա հետ մեկտեղ, գտնում եմ, որ միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից չի կարող նվազեցվել գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, քանի որ դա կարող է հանգեցնել նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ԷՄ ԷՅ ԷԼ ՎԻ Մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷՄ Էյ ԷԼ ՎԻ Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ի 10.01.2020թ. ներկայացրած բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՁՀ-ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Ա/Ձ Պավել Գաբրիելյան Կամոյին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**